**ՆԱԽԱԳԻԾ**

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2025 թվականի N 85-Ա

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1.Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24–ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի տեսակները, դրույքաչափերը, արտոնությունները և տեղական տուրքի վճարումից հետո գործողության իրականացման առավելագույն ժամկետները սահմանելու մասին

1.2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2026 թվականի տեղական վճարների տեսակները, դրույքաչափերը, արտոնությունները և տեղական վճարի վճարումից հետո ծառայությունների մատուցման առավելագույն ժամկետները սահմանելու մասին

1.3. 2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը, արտոնությունները և ծառայությունների մատուցման առավելագույն ժամկետները սահմանելու մասին

1.4. Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, 2025 թվականի փետրվարի 20-ի N 19-Ա որոշման 2-րդ կետը և 2025 թվականի մայիսի 13-ի N 42-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

1.6. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացում կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին

1.7. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

1.8. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին

1.9. Ջերմուկ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին

1.10. Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

1.11. Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին.

1.12. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 11-ի N 27-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

1.13. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայոց ձոր-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Ջերմուկ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագիծը (գոտևորման նախագիծը) հաստատելու մասին

1.14. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 52-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

1.15. «Օն Դիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին

1.16. «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու համաձայնություն տալու մասին.

1.17. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Շահումյան փողոցի 19-րդ շենքի N 59 բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին

1.18. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

1.19. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

1.20. Ջերմուկ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Նախագիծը պատրաստեց Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյանը